ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ք. Երևան «27» սեպտեմբերի 2022թ.

2022 թվականի սեպտեմբերի 27-ին տեղի ունեցավ ՔՏՀԱ տեսչական մարմնի Կառավարման խորհրդի արտահերթ նիստ՝ հեռակա քվեարկությամբ:

Օրակարգում ընդգրկված հարցին վերաբերող համապատասխան նյութը սահմանված ժամկետում ներկայացվել է Կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգում ընդգրկված էր հետևյալ հարցը.

1. Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կառավարման խորհրդի կողմից ՀՀ վարչապետին ներկայացնել առաջարկություն տեսչական մարմնի ղեկավար Գեղամ Շախբազյանին պաշտոնից ազատելու վերաբերյալ՝ հաշվի առնելով Գեղամ Շախբազյանի դիմումը:

Քվեարկությանը մասնակցել են՝

Ա. Փամբուխչյան	- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար (խորհրդի նախագահ)
Գ. Սանոսյան	- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Ա. Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Հարությունյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ն. Տերյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Վ. Հովհաննիսյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Ա. Ղուլարյան	- Քաղաքաշինության կոմիտեի նախագահ
Ս. Թովմասյան	- ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար
Տ. Քեյան	- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ
Տ. Բաբայան	- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Դ. Սողոմոնյան	- «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի հողաշինարարություն և հողային կադաստրի ամբիոնի ասիստենտ, համալսարանի գիտական խորհրդի անդամ, տեխնիկական գիտությունների թեկնածու
Ս. Հովսեփյան	- Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտորի խորհրդական, տեխնիկական գիտությունների թեկնածու

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքները՝ 7 կողմ, 5 դեմ:

Կառավարման խորհրդի անդամ, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտորի խորհրդական, տեխնիկական գիտությունների թեկնածու Սուրեն Հովսեփյանը, քվեարկելով «ԴԵՄ», ներկայացրել է նաև հետևյալ դիտարկումը. «Հաշվի առնելով պարոն Շախբազյանի դրական փոփոխություններ իրականացնելու տեսլականը և իրականացրած դրական փոփոխությունները, կարևորում եմ պարոն Շախբազյանի հետագա աշխատանքը նույն պաշտոնում»:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Կառավարման խորհուրդը որոշեց.

1. Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կառավարման խորհրդի կողմից ՀՀ վարչապետին ներկայացնել առաջարկություն տեսչական մարմնի

ղեկավար Գեղամ Շախբազյանին պաշտոնից ազատելու վերաբերյալ՝ հաշվի առնելով Գեղամ Շախբազյանի դիմումը:

Կառավարման խորհրդի նախագահ՝

27.09.2022

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Подписано: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246 **Ա. Փամբուխչյան**

Կառավարման խորհրդի քարտուղար՝ **Ա. Հայրապետյան**